Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 15.04.2021թ. թիվ 2112572531 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<03>> 05 2021թ. 7-13- 7087 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով քաղաքացի Էդգար Սարոյանի ՄԴ/32203-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կիևյան փողոցի 8-րդ շենքի 56/1-րդ բնակարանի բնակիչ Էդգար Սարոյանը դիմումով իր անհամաձայնությունն է հայտնել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112572531 որոշմանը՝ նշելով, որ իր ավտոմոբիլը չի կայանել երկրորդ շարքում և չկա որևէ արգելող նշան:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին թիվ 2112572531 որոշումը օրինական է և իրավաչափ, իսկ դիմումատուի փաստարկն այն անվավեր ճանաչելու հիմք չի կարող հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ և վայրում գործող օրենսդրության հիման վրա:

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը,որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 80-րդ կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցը տեղակայել թույլատրվում է երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով՝ բացառությամբ այն տեղերի /երթևեկելի մասի տեղային լայնացում/, որտեղ գծանշմամբ թույլատրված են տրանսպորտային միջոցների դասավորման այլ ձևեր:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124--րդ հոդվածի 21-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը, առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 83-րդ կետի համաձայն՝ կանգառն արգելված վայրում հարկադրված կանգառ կատարելու դեպքում վարորդը առաջին հերթին պետք է կատարի նույն որոշման 22-րդ (**վթարային լուսային ազդանշանը պետք է միացված լինի կանգառն արգելված տեղերում հարկադրված կանգառի դեպքում**) և 23-րդ **(կանգառն արգելված տեղերում հարկադրված կանգառի դեպքում վթարային լուսային ազդանշանը միացնելուց հետո (ինչպես նաև, երբ այն անսարք է կամ բացակայում է) անհապաղ պետք է տեղադրվի <<վթարային կանգառ>> ճանաչման նշանը (թարթող կարմիր լապտերիկ),** կետերի պահանջները, որից հետո վարորդը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ տրանսպորտային միջոցն այդ վայրից դուրս բերելու համար: Վիճարկվող որոշման հիմքում դրված տեսանյութը փաստում է, որ դիմումատուի կողմից չի կատարվել վերը նշված որոշման պահանջը, ինչը կփաստեր, որ կանգառը հարկադրված է եղել և առիթ կհանդիսանար վիճարկվող որոշումը վերանայելու համար:Նույն որոշման 25-րդ կետի համաձայն՝ արգելվում է առավելություն ստանալու, ինչպես նաև կանգառն արգելված վայրերում կանգառ կատարելու (բացառությամբ հարկադրված կանգառի) նպատակով վթարային ազդանշանի օգտագործումը:

Իրավախախտումը ամրագրած թիվ 2112572531 որոշման տեսանյութը փաստում է, որ դիմումատուին պատկանող<<TOYOTA>> մակնիշի 70XX070 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը տեղակայված է եղել Երևան քաղաքի Գայի-Ստեփանյան փողոցների խաչմերուկի հատվածի երթևեկելի մասի երկրորդ շարքում 29.03.2021թ-ին ժամը 19:17:22-րդ վայրկյանից, 19:18:55-րդ վայրկյանը՝ 93 վայրկյան տևողությամբ, իսկ <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 39-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 21-րդ և 25-րդ մասերով (միայն կանգառ կատարելու մասով) նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ կանգառը կատարվել է միայն ուղևորների նստելու կամ իջնելու նպատակով, չի գերազանցել **մեկ րոպե ժամանակահատվածը**, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել:

Այսպիսով, դիմումատուի արարքում առկա են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի հատկանիշները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 15.04.2021թ. թիվ 2112572531 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Սույն որոշման օրինակն ուղարկել Էդգար Սարոյանին:

Ե.Կարապետյան

Կատարող՝ Հ.Կարապետյան
Հեռ.011544-783